# ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 61 (24614), հատավաճառ՝ 20000 ռիալ
سال نودودوم - شماره (٢٤٦١٤) ٦١ - تکشماره ٢٠٠٠٠ ریال - ٨ صفحه

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ
18 ՄԱՐՏԻ 2024

دوشنبه – ۲۸ اسفند ۱۴۰۲

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی





## ԳԱՐՈՒՆԸ ՀԱՅԵՐԷՆ Է ԳԱԼԻՍ

ՀԱՄՕ ՍԱՀՅԱՆ



*Գարունդ հայերէն է գալիս,*
*Զիներդ հայերէն են լալիս,*
*Հայերէն են յորդում ջրերդ,*
*Հաւքերդ երգում են հայերէն,*
*Խոփերդ հերկում են հայերէն,*
*Հայերէն են տոկում գրերդ:*
*Արեւդ հայերէն է ծագում,*
*Ծառերդ հայերէն են ծաղկում,*
*Հայերէն են պայթում բառերդ:*
*Հունդերդ ծլում են հայերէն,*
*Ձեռքերդ կռում են հայերէն,*
*Հայերէն են լռում քարերդ:*
*Ջրերդ շնչում են հայերէն,*
*Ջոհերդ ննջում են հայերէն,*
*Հայերէն են տանջում ցաւերդ:*
*Որքան էլ ձեռքից գնացել,*
*Դու էլի հային ես մնացել,*
*Հայերէն են յառնում սարերդ:*
*Թող Աստուած եղածը պահի,*
*Եւ յետոյ ինչ էլ պատահի,*
*Զիներդ հայերէն են լալու,*
*Գարունդ հայերէն է գալու,*
*Հայերէն են գալու դարերդ:*



Լուսանկարում՝ Դադիվանքն է, բռնազաւթուած Արցախում

## ՆՈՌՈՒԶԵԱՆ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



*Մօտալուտ Նոր տարւայ-Նոռուզի տօնի առիթով, սրտանց շնորհաւորում եմ իրանցի մեր հայրենակիցներին մաղթելով, որ սկսուող 1403 տարին լինի խաղաղութեան, սիրոյ, եղբայրութեան, բերրիութեան, նոր նուաճումների, յաջողութեան եւ աստուածային օրհնութեամբ օծուն մի տարի:*

(Տես 2-րդ էջում)

Արա Շահվերդեան.

## «Իմ առանձնայատուկ վերաբերմունքը ժողովրդին շարունակելու է»



*Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանը «ԱԼԻՔ»-ի հետ զրոյցում ամփոփում է իրանական 1402 թուականը՝ առանձնացնելով, դրւագներ նախորդ տարւանից: Իրանի Իսլամական խորհրդարանի պատգամաւորը նախատեսում է յարաբերութիւնների զարգացում Իրանի եւ Հայաստանի միջեւ, եւ ակնարկում հայկական դպրոցների զարգացման, որակի բարելաւման ծրագրերին, ինչպէս նաեւ՝ համապարփակ անդրադարձ է կատարում իր ապագայ ծրագրերին:*

**Հարցազրոյցի ամբողջական տեքստը մեր օրաթերթի 3-րդ էջում:**

Իշխան Սաղաթէլեան.

## «Սահմանագծումը սկսել են Տաւուշից, որ թշնամուն բերեն մեր զինուորի թիկունք»

(Տես 8-րդ էջում)



*Գարուն, սէրդ իգական է*
*Պայթած բողբոջի ծաղիկ,*
*Անունդ գարուն ու սէրդ իգական է.*
*Բուրմունքիդ թոյնը սպանում է ինձ,*
*Ինչպէս կնոջ մրրիկ մարմնիս մէջ:*
*Ամբողջ կեանքի յիշողութիւն է քո ակնթարթը,*
*Իսկ օրւայ մէջ անմահութիւնն է տեղաւորւում.*
*Լոյսը կաթում է ուղիղ սիրտս ասեղի պէս,*
*Եւ կոպերիս վրայ ներկայ ժամանակ են բոլոր սէրերս,*
*Որ սպասում են ամէն անգամ քո գալուն,*
*Գարուն անունով աղջիկ:*

***Յուսիկ Արա (ծնւած՝ 1967 թւականին) հայ գրող, արդի հայ գրականութեան ճանաչւած դէմքերից***


ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی-شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

# ՆՈՌՈՒԶԵԱՆ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

*Մօտալուտ Նոր տարւայ-Նոռուզի տօնի առիթով, սրտանց շնորհաւորում եմ իրանցի մեր հայրենակիցներին մաղթելով, որ սկսող 1403 տարին լինի խաղաղութեան, սիրոյ, եղբայրութեան, բերրիութեան, նոր նւաճումների, յաջողութեան եւ աստուածային օրհնութեամբ օծուն մի տարի:*

*Գարնանաբոյր այս օրերին, երբ բնութիւնը նախախնամական տնօրինումով վերանորոգւում է նոր փայլք եւ գեղեցկութիւն պարգեւելով աշխարհին եւ յատկապէս իրանեան մեր հայրենիքին, մենք եւս պարտ ենք մեզ վերանորոգել սիրոյ, եղբայրութեան, հայրենասիրութեան եւ համագործակցութեան ոգիով:*

*Բոլորս էլ գիտենք, որ նորն ու նորոգութիւնը կեանքից անբաժան երեւոյթներ են: Արդարեւ վերանորոգւած բնութեան նայելիս մենք էլ մեզ վերանորոգենք սիրելի հայրենակիցներ եւ նորոգւած մտքով ու հոգիով կառչած մնանք մեր հայրենիքին եւ հայրենական աւանդութիւններին ու բարեպաշտական սովորութիւններին:*

*Աղօթում եմ, որ Աստուած զօրացնի եւ փորձանքներից հեռու պահի մեր սիրելի Իրանն ու իրանցիները: Առողջութիւն, առաւել իմաստութիւն շնորհի, երկրի շնորհազարդ հոգեւոր առաջնորդին ու հանրապետութեան նախագահին ու իր կառավարութեան, այլեւ ողջ Իրանի ժողովուրդը:*

*Կոչ եմ անում մեր սիրելի հայրենակիցներին, որ աղօթեն Գազայի ժողովրդի համար, մեր տարածաշրջանի խաղաղութեան եւ ժողովրդի բարեկեցութեան համար: Միաստուածեան մեր կրօնների հիմնական եւ առանցքային ուսուցումները խարսխւած են սիրոյ, խաղաղութեան, համերաշխութեան եւ համատեղ գոյակցութեան: Թող 1403 տարին բոլորիս համար լինի Աստծոյ օրհնութեամբ լի մի տարի:*

*Թող Աստուած անսասան պահի Իրանը իր ժողովրդով:*

*Շնորհաւոր Նոռուզ:*

**ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ**
**ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ**
**Նոռուզ 1403**

# «Ո՛չ քո հօր տարածքներն են, ո՛չ դու սուլթան ես, խան ես, ո՛չ թագաւոր ես, ո՛չ էլ գնել ես այդ հողերը»

## Բագրատ Սրբազանը՝ Փաշինեանին

*Տաւուշի մարզի 4 գիւղերը յանձնելու վերաբերեալ յայտարարութիւնը ոչ միայն դա թշնամական պահանջ է, այլ նաեւ, ցաւօք սրտի, ՀՀ կառավարութեան եւ նրա ղեկավարի թուլակամութեան եւ կարող եմ յստակ ասել, հայրենիք չունենալու հոգեբանութեան արտայայտութիւն: Այս մասին մարտի 16-ին Ոսկեպարի Սուրբ Աստուածածին եկեղեցում մատուցւած պատարագից յետոյ իր քարոզում ասել է Տաւուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանեանը:*



*«Կոյր պէտք է լինել, կամ կուրացած, կուրացածի վրայ էլ ուրացած, որ մոռանաս, կամ վախի ներքոյ չկարողանաս այդ ստացած ժառանգութիւնը համարես քոնը եւ տէր կանգնել: Ես գաղտնիք չեմ ասի ձեզ, որ շարունակաբար մենք գտնւում ենք դաւաճանւած ու ուրացւած լինելու այս ամբողջ գործընթացում: Այն սկսւել է Արցախի աշխարհով, նրա ուրացումով, հայրենազրկումով եւ այդպէս շարունակւում է քայլ առ քայլ եւ դուք ինքներդ էք վկայ, որ ընդամէնը մի քանի օր առաջ յայտարարւեց, որ Տաւուշ աշխարհից, այսպէս կոչւած 4 գիւղեր, յետոյ անշուշտ հերքելով, որ գիւղեր չեն դրանք, տարածքներ են, տրւելու են թշնամուն: Եւ ոչ միայն դա թշնամական պահանջ է, այլ նաեւ ցաւօք սրտի, ՀՀ կառավարութեան եւ նրա ղեկավարի թուլակամութեան եւ կարող եմ յստակ ասել, հայրենիք չունենալու հոգեբանութեան արտայայտութիւնն է: Մենք այս ամբողջ ժամանակահատւածում ապրել ենք եւ ապրում ենք ստի, կեղծիքի, հայրենիք յանձնելու, հող յանձնելու ամէն ինչի անւան տակ եւ այսօր էլ վախեցնելով պատերազմով, եթէ սա չանենք՝ պատերազմ կը լինի»,- ասել է նա:*

*Տաւուշի թեմի առաջնորդի խօսքով՝ Ոսկեպարի 7-րդ դարի եկեղեցին հաստատում է, որ սա թշնամու հող չի, այլ «մեր տկարութիւնների եւ մեղքերի» պատճառով կտրւել է:*

*«Որեւէ ժամանակ այն չի դադարելու լինել մեր տունն ու հայրենիքը: Այստեղ բնակւող մեր հայրենակիցներն են, որ գողացւել են, սպանւել են, անընդհատ արհաւիրքների են հանդիպել, բայց քաջաբար եւ հերոսաբար ոչ միայն դիմադրել են, այլ նաեւ յաղթանակ են տարել: Հիմա մեր այդ գողացւած յաղթանակները, մեզ համար որպէս պարտութեան գլխաւոր խորհրդանիշ հող յանձնելով են պայմանաւորում»:*

*Բագրատ Սրբազանը ասում է, որ որեւէ մէկը իրաւունք չունի յանձնել իր հայրենիքի որեւէ տարածք. «Հիմա էլ ասում են՝ ոչ, գիւղեր չենք յանձնում, տարածքներ են դրանք: Ո՛չ քո հօր տարածքներն են, ո՛չ դու սուլթան ես, խան ես, ո՛չ թագաւոր ես, ո՛չ էլ գնել ես այդ հողերը, որ հիմա էլ յանձնում ես կամ փորձում ես յանձնել: Գիտ են, թէ գիտ չեն, որեւէ կարեւորութիւն չկայ, մեր հայրերի ու եղբայրների արիւնը աւելի շատ է այստեղ, այս հողերը, դաշտերը արիւնով են անընդհատ ոռոգւել ջրի փոխարէն»:*

*Տաւուշի թեմի առաջնորդը ընդգծում է, որ հիմա ժողովուրդը պէտք է որոշի՝ յանձնել, թէ ընդվզել, ընդդիմանալ եւ «կտրել այն ձեռքը, որ փորձում է խառնել մեր տունը»:*

*«Մոնթէն ասում էր՝ Արցախը յանձնելով, մեր պատմութեան վերջին էջը շրջեցինք, Տաւուշի այս գիւղերի յանձնումը կը լինի ոչ թէ պատմութեան վերջին էջը շրջել, այլ հայութեան պատմութեան գիրքը փակել, քանի որ մենք մի տեսակ դրւած ենք դաղաղի մէջ միայն եւ այդ վերջին մեխերն են մնացել, որ յարութեան յոյս էլ չունենանք: Բայց չի լինելու դա, ինչ էլ անէք»,-ասել է նա:*

**Yerevan.today**

# Իրանահայ 33-րդ Գարնանային խաղերի ջահը բոցավառւեց եւ օրհնւեց Ս. Ամենափրկիչ վանքում

*Կիրակի, մարտի 17-ի կէսօրին, Ս. Ամենափրկիչ վանքում, Հայոց Ցեղասպանութեան Սուրբ Նահատակների յիշատակը յաւերժացնող յուշարձանի անմար կրակով բոցավառւեց Իրանահայ 33-րդ Գարնանային խաղերի ջահը, որն օրհնւեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սիփան արք. Քէչէճեանի ձեռամբ:*



*Ջահը յանձնւեց այս մրցաշարի գլխաւոր ջահակիր, սկաւառականետորդ Նարէ Ղարախանեանին: Ջահակիր խմբի միւս անդամներն են՝ լողորդ Անի Մկրտչեանն ու կարատէիստ Արամէ Սիմոնեանը:*





*Արարողութեանը ներկայ էին՝ թեմի ազգային մարմինների պատասխանատուները եւ Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան պատւիրակութիւնը:*

*Իրանահայ 33-րդ Գարնանային խաղերի բացումը տեղի կունենայ երեքշաբթի, մարտի 19-ին, երեկոյեան ժամը 18:30-ին, «Արարատից Արարատ» նշանաբանի ներքոյ:*

**Թղթակից (Նոր Ջուղա)**

Իրանցի փորձագէտի ակնարկը՝

# Բաքւի համագործակցութեամբ Կովկասում երկրորդ Իսրայէլի ստեղծման վտանգների մասին




*«ԱԼԻՔ» - Միջազգային իրաւունքի աւագ փորձագէտ եւ Եւրասիական հարցերով փորձագէտ դոկտ. Ահմադ Քազեմին իր ինտերնետային կայքում հրապարակած վերջին յօդւածով անդրադարձել է սիոնիստական ռեժիմի երկարատեւ ծրագրերին, տարածաշրջանում երկրորդ Իսրայէլի ստեղծման նպատակով, որի կարեւոր նախապայմաններից մէկը Մոսկւայի եւ Թեհրանի միջեւ բուֆերային գօտիների վերահսկումն է: Իսկ սա իրականացւել է «Դարի ամենամեծ էթնիկ զտումներից» մէկի՝ հայերի պատմական բնակավայր հանդիսացող Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցածով: Փորձագէտը յաւելել է, որ այդ «էթնիկ զտումներն» ուղեկցւել է Քրիստոնէական աշխարհի լռութեամբ, որի հետեւանքով աւելի քան 120 հազար հայ է վտարւել իր պատմական բնօրրան Ղարաբաղից:*

*Նա յօդւածի սկզբում նշելով, որ Ադրբեջանի Հանրապետութիւնը միշտ էլ առանձնայատուկ գրաւչութիւն է ունեցել սիոնիստական ռեժիմի համար, յատկապէս, շիա բնակչութեան մեծամասնութեան, Իրանի եւ Ռուսաստանի միջեւ բուֆեր լինելու եւ ունեցած էներգետիկ ռեսուրսների պատճառով, անդրադարձել է Ադրբեջանի Հանրապետութիւնում վերջին երեք տասնամեակների ընթացքում Թել Աւիւի քաղաքական, ռազմական, անվտանգային, տնտեսական, էներգետիկ, մշակութային, կրթական (միջամըտութեամբ՝ դասագրքերի կրթական բովանդակութեան մէջ), պատմական (Հանրապետութեան պատմութեան կեղծում) գործունէութեանը:*

*Սիոնիստները կենտրոնանալով հին իրէական կայսրութեան յաւակնութեան վրայ փորձում են խազարականների անւան տակ ստեղծել ենթադրեալ քաղաքակրթութեան ճարտարապետական մոդելը՝ Բաքւում եւ Ադրբեջանի Հանրապետութիւն կոչւող տարածաշրջանի այլ քաղաքներում սիոնիստական ու մասոնական խորհրդանիշերի տարածումն ու հաստատումը դիւրին դարձնելու համար:*

*Փորձագէտը նկատել է տալիս, որ հակաիրանական էթնիկ ցանցերի ստեղծումը եւս նրանց օրակարգի կարեւոր կէտերից մէկն է, որով շիականութեան դէմ, ինչպէս նաեւ Ադրբեջանի Հանրապետութիւնում բնակւող իրեաների թաքանակի ուռճացման պրոպագանդան խօսում է այն մասին, որ սիոնիստական ռեժիմը Ադրբեջանի Հանրապետութիւնում «նորմալ նպատակներ» չի հետապնդում:*

*Դոկտ. Քազեմին յաւելել է, որ սիոնիստական իշխանութիւնները բազմիցս Ադրբեջանի Հանրապետութիւնն անւանել են «իրեաների երկրորդ տուն», ինչը, իհարկէ, պատմականօրէն անհիմն է: «Ուկրաինայի պատերազմից յետոյ «Սուխնուտ» գործակալութեան կենտրոնը (հրէական գործակալութիւն) Մոսկւայից տեղափոխւեց Բաքու: Դրանից յետոյ մի քանի անգամ աւելացել են Բաքու-Թել Աւիւ կանոնաւոր թռիչքները: «Սուխնուտ»-ը սկսել է իրեաներին բնակեցնել Բաքւում երկու տասնամեակի ընթացքում կառուցւած բնակարաններում»,- նշել է փորձագէտը:*

*«Դրանից յետոյ էր, որ սիոնիստական ռեժիմի անմիջական օգնութեամբ եւ Բաքւի կողմից 2023 թւականի սեպտեմբերին տեղի ունեցաւ «դարի ամենամեծ էթնիկ զտումներից» մէկը՝ հայերի պատմական բնակավայր հանդիսացող Լեռնային Ղարաբաղում: Այս «էթնիկ զտումների» ընթացքում, որն ուղեկցւում էր Քրիստոնէական աշխարհի լռութեամբ, աւելի քան 120 հազար հայ վտարւեց Ղարաբաղից, եւ այս շրջանն այժմ ամայի է: Ներկայումս ժողովրդագրական փոփոխութիւնը Ղարաբաղի հարակից շրջաններում (Զանգիլան, Ղոբատլի, Աղդամ, Քարվաճառ եւ Լաչին) կատարւում է սիոնիստական ռեժիմի ընկերութիւնների կողմից «խելացի գիւղերի» ստեղծման, ինչպէս նաեւ Սիրիայից վտարւած թաքֆիրական ընտանիքների բնակեցման քողի ներքոյ: «Անմարդաբնակ Ղարաբաղում» իրեաների բնակեցման նախերգանքն է»,- արձանագրել է փորձագէտը:*

*Յօդւածագիրը շարունակութեան մէջ ընդգծել է, որ սա է հիմնական պատճառը, թէ ինչու «Քրիստոնեայ Անգլիան» շարունակում է աջակցել Լեռնային Ղարաբաղից «քրիստոնեայ հայերի» էթնիկ զտմանը, եւ յաւելել. «Արգենտինայի Պատագոնիա շրջանում» «երկրորդ Իսրայէլ» ստեղծելու ծրագրի տապալումից յետոյ սիոնիստական ռեժիմը Ադրբեջանի Հանրապետութիւնում հետեւում է նոյն ծրագրին: Որովհետեւ, բացի աշխարհաքաղաքական դրդապատճառներից, Ալիեւների ընտանիքը, որը, ըստ որոշ եւրոպական կառոյցների արձանագրութիւնների, աշխարհում ֆինանսական կոռուպցիայի սանդղակում զբաղեցնում է առաջին հորիզոնականը, ոչինչ անել չի կարող սիոնիստական ռեժիմի դէմ: Ալիեւի ընտանիքը պարտաւորւել է Ղարաբաղում սիոնիստների բնակեցումը հաստատել՝ սիոնիստական ռեժիմի ռազմական եւ Անգլիայի քաղաքական (Անվտանգութեան խորհրդում) աջակցութեան դիմաց ստանալ Ղարաբաղը: Ալիեւի ընտանիքի քաղաքականութիւնը եւրոպիզմից եւ ամերիկանիզմից (Հէյդար Ալիեւի օրօք՝ 1993-2003 թթ.) փոխւել է Իլհամ Ալիեւի օրօք (2003 թ.-ից) «իսրայէլականութեան»: Այսօր, չնայած Գազայում սիոնիստական ռեժիմի զանգւածային ցեղասպանութեան դէմ միջազգային բողոքներին, Ալիեւի ընտանիքը այս ռեժիմին անհրաժեշտ նաւթի ամենամեծ մատակարարն է»,- գրում է միջազգային իրաւունքի աւագ փորձագէտը:*

Արա Շահվերդեան.

# «Իմ առանձնայատուկ վերաբերմունքը ժողովրդին շարունակելու է»

Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանը ամփոփում է իրանական 1402 թւականը



**- Պարոն Շահվերդեան, ինչ դրւագներով կամփոփէք նախորդ իրանական 1402 թւականը:**

-Նախորդ մէկ տարւայ ընթացքում Իրանի կառավարութիւնը իր արտաքին քաղաքականութեան մէջ առաջընթաց է ունեցել: Յիշենք, որ նախորդ տարի Իրանը դարձել է BRICS խմբի լիիրաւ անդամ: Միջազգային տնտեսութեան վրայ ազդելու մեծ կարողականութեամբ այս խումբը, որը ձեւաւորւել է զարգացող տնտեսական երկրների եւ Ռուսաստանի ու Չինաստանի միջեւ համագործակցութեան արդիւնքում, գոյացել է Արեւմուտքի տնտեսական եւ աշխարհաքաղաքական գերակայութեան դէմ հաւասարակշռութիւն ստեղծելու նպատակով: Նաեւ Շանհայի համագործակցութեան կազմակերպութեանն Իրանի լիակատար մասնակցութիւնը այս տարի հաստատւել է առաջնորդների կողմից Դուշանբէի գագաթնաժողովում:

Բնականաբար այստեղ կարեւոր է այդ կազմակերպութիւններին Իրանի ներգրաւումը: Դրանք միջազգային կարեւոր ձեռքբերումներ են եղել, որոնք նպաստել են Իրանի յարաբերութիւնների հարեւան երկրների հետ զարգացմանը: Իրանի ուշադրութեան կենտրոնում է եղել Հարաւային Կովկասը, մասնաւորապէս, Հայաստանը: Կառավարութիւնը եւ խորհրդարանը ինչպէս նաեւ միւս գերատեսչութիւնները նախորդ մէկ տարւայ ընթացքում հանդիպումներ են ունեցել հայաստանցի գործընկերների հետ: Կարեւորը այդ հանդիպումներից պաշտպանութեան նախարարի այցելութիւնն է եղել, միջկառավարական համատեղ յանձնաժողովի հերթական նիստի անցկացումը, որի ժամանակ, բնականաբար, կարեւոր համաձայնութիւններ ձեռքբերւեց, յատկապէս, Ագարակից դէպի Քաջարան ճանապարհաշինութեան հարցով հայկական ընկերութիւնների հետ համագործակցութեան մեկնարկի մասին:

Քաղաքական առումով «3+3» ֆորմատը արձանագրել է զարգացումներ, որին նաեւ միշտ կողմ է եղել Իրանը: Այս տարւայ կարեւոր ձեռքբերումներից եղաւ նաեւ ԱԳ նախարարի այցը՝ Հայաստան, երբ ՀՀ-ում մէկօրեայ այց ունեցանք եւ Անվտանգութեան խորհրդի քարտուղարի եւ ՀՀ վարչապետի հետ հանդիպումներ ընթացան ընդհանուր քաղաքական եւ անվտանգութեան հարցերի շուրջ: Կարեւոր է արձանագրել, որ նախորդ տարի իրանահայ համայնքի եւ պետական տարբեր գերատեսչութիւնների միջեւ համագործակցութիւններ են ընթացել՝ Բարձր տեխնոլոգիական Արդիւնաբերութեան նախարարութիւն, Ֆինանսների, Կրթութեան նախարարութիւն, Ազգային անվտանգութեան գերատեսչութիւն, դատաիրաւական մարմիններ, ոստիկանութիւն եւ այլն:

**-Պարոն Շահվերդեան առաջիկայ տարւայ համար համայնքային զարգացման ինչ իրավիճակ էք կանխատեսում, եւ երկու երկրների Իրանի եւ Հայաստանի միջեւ նախատեսում էք կապերի զարգացում:**

-Կարելի է նախատեսել յարաբերութիւնների զարգացում Իրանի եւ Հայաստանի միջեւ, որովհետեւ Հայաստանը Իրանի կարեւոր հարեւան երկրներից մէկն է, որի հետ ունեցած սահմանների անձեռնմխելիութիւնն է կարեւորւում: Յատկապէս, այսպէս ասած, «Զանգեզուրի միջանցք»-ի անհնարինութեան հարցն է առաջ քաշւում եւ շեշտադրւում է տարածաշրջանային երկրների աշխարհաքաղաքական քարտէզների անձեռնմխելիութեան կարեւորութեան մասին, որպէս Իրանի անվտանգութեան կարմիր գիծ:

Ներհամայնքային առումով նախորդ տարի ունեցել ենք համայնքային մասշտաբով Պատգամաւորական ժողով, երբ յունիս ամսին անդրանիկ նիստ գումարւեց, որից յետոյ համայնքը աշխուժացաւ, երբ տարբեր միջոցառումներ տեղի ունեցան: Այս տարի նաեւ աւելի քան 200 մարզիկմարզուհիներ մասնակցել են Հայաստանի Հանրապետութիւնում կայացած ամառային 8-րդ Համահայկական մրցոյթներին:

Ս. Թադէոս Առաքեալի վանքի ուխտագնացութիւնն է ընթացել, եւ ինչպէս Ատրպատականի շրջանում, այնպէս էլ իրանահայութեան տարբեր համայնքներում ազգային-կրօնական եւ պետական միջոցառումներ են ընթացել:

Բնականաբար, մենք նաեւ դպրոցների հարցերն ունենք, որոնք շատ կարեւոր են, որովհետեւ դրանից է կախւած մեր աշակերտութեան, մեր երեխաների ապագան: Խնդիրն այն է, որ դպրոցները շատ են, աշակերտութեան թիւը պակսել է, դպրոցները քիչ են ստանում պետական սուբսիդներ եւ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Եւս մէկ փաստ արձանագրենք, որ սրանից աւելի քան 15 տարի առաջ օպտիմալացման գաղափարն է առաջ քաշւել, որպէսզի հնարաւոր դառնայ նաեւ երկսեռ դարձնել դպրոցները: Ես ուզում եմ շեշտել, որ դպրոցների հետ կապւած տարբեր ծրագրերի գործարկման պլաններ ունենք: Բնականաբար, ցանկացած բան, որ սկզբից գործարկում ես, խնդիրներ է ունենում, յատկապէս օպտիմալացման եւ ռեսուրսների կառավարման հարցով մենք փորձելու ենք նոր քայլեր իրականացնել: Առողջապահութեան ոլորտում եւս ծրագրեր ունեցել ենք, եւ ապագայում եւս շարունակւելու են, փորձելու ենք ծերանոցներին եւ «Ա. Աւետիսեան» ազգային բուժարանին յատկացւող պետական աջակցութեան նոր ռեսուրսներ տրամադրել, ինչպէս սոցիալական խնդիրների լուծման ոլորտում, այնպէս էլ մշակութային, թանգարանային, մարզական, ասպարէզներում եւս բազում աշխատանքներ ենք կատարել եւ կը շարունակենք իրականացնել: Այստեղ ես ցանկանում եմ ընդգծել, որ շատ կարեւոր է նաեւ այն ծրագրերը, որոնք մենք պետական բիւջէի միջոցներով հայկական մարզամշակութային կենտրոնների համար ապահովում ենք, տրամադրելով նոր հնարաւորութիւններ:

**-Ինչ էք կարծում, ո՞րն է խնդիրը հայկական դպրոցների զարգացման, որակի բարելաւման համար, որի շուրջ նաեւ դուք մեծ ջանքեր էք գործադրում, այդ մասին վկայում են Ձեր կատարած բազմաթիւ այցելութիւնները հայկական դպրոցներ եւ պետական ու կրթական գերատեսչութիւնների հետ ունեցած հանդիպումները:**

-Անհրաժեշտ է աւելի լրջօրէն ուսումնասիրութիւններ իրականացնել, որպէսզի ճիշտ կառավարենք դպրոցների, մանկապարտէզների ռեսուրսները դրանք ե՛ւ կայունութիւն ունենան, ե՛ւ զարգացում: Անհրաժեշտ է գիտացել հայկական թաղամասերում հարկաւոր է աշակերտութեան թւի աճի համար քայլեր կատարենք, հետեւաբար թաղամասի Պատգամաւորական ժողովի պատգամաւորները պէտք է ուղղակի հանդիպումներ ունենան խնդրի լուծման համար: Փոփոխութիւնների ընթացքում հնարաւոր է դժւարութիւններ, դիմադրութիւններ լինեն, բայց եթէ ամէն ինչ ճիշտ մտածւած լինի մեր ժողովուրդը գիտակից է եւ ճիշտ կը կողմնորոշւի: Հետեւաբար, հարկաւոր է նւազագոյն տոյժով կատարենք փոփոխութիւնները, որպէսզի ժողովրդին նաեւ բացատրենք տեղի ունեցածը: Այստեղ չմոռանանք, որ իրանահայութիւնը քաղաքացիական պարտաւորութիւններից ելնելով գիտակցաբար մասնակից է դարձել Իրանի Իսլամական խորհրդարանի ընտրութիւններին եւ արձանագրել է մասնակցութեան թւի աճ, համայնքում նաեւ մեծ ակտիւութիւն ենք ունեցել, այսինքն լայնածաւալ աշխատանքներ են կատարւել համայնքում. ձեռք ենք մեկնել, որպէսզի մէկս միւսին օգնելով դժւարութիւնները հաղթենք: Նաեւ կրթական ոլորտում ժողովրդին միջամուխ կատարելով այդ փոփոխութիւնները հնարաւոր է իրականացնել, հետեւաբար մեր ազգային կառոյցները պէտք է նկատի առնեն իրավիճակը:

**-Պարոն Շահվերդեան, որո՞նք են Ձեր ապագայ ծրագրերը գալիք տարւայ համար:**

-Իրանի քաղաքականութիւնը բաւական լուրջ աշխատանքներ է իրականացրել երկրի զարգացման ուղղութեամբ: Նախորդ չորս տարիներին, հայութեան համար եւս նշանակալի քայլեր են կատարւել կապւած ժառանգութեան հարցին եւ այլն: Նախորդ մէկ տարւայ ընթացքում օրէնքներ են մշակւել եւ ընդունւել, այստեղ առկայ է նաեւ տնտեսական բարդութիւններ, պատժամիջոցներ, որոնք երկրին թուլացնելու նպատակ են հետապնդում: Հետեւաբար, ունենք նաեւ տնտեսական բարդութիւններ: Ապագայ ծրագրերից են Հայոց Ցեղասպանութեան հարցը, որպէս բանաձեւ ընդունելու գործընթացը, ընդհանրապէս, որպէսզի հնարաւոր լինի բանաձեւի ձեւաչափով անցկացնել, Պաղեստինի ժողովրդի եւ Միջին Արեւելքի տարբեր ոճրագործութիւնների համար իրականացւել է, սակայն Մեծ Եղեռի կապակցութեամբ այն չի անցել Իրանի Իսլամական խորհրդարան: Յուսով ենք, այս տարի կը յաջողենք այդ բանաձեւն անցկացնել: Այս տարի նաեւ Թեհրանում տեղի է ունենալու Վեհափառ Հայրապետի գլխաւորութեամբ Հայ Առաքելական Եկեղեցու երկխօսութեան նիստ: Հետեւաբար, լիայոյս ենք, որ այս տարի այն տեղի կունենայ եւ կընթանայ երկխօսութիւն Իսլամ եւ Հայ Առաքելական Եկեղեցու միջեւ: Առաջիկայ աշխատանքներում է նաեւ երիտասարդների եւ ընդհանրապէս այդ ոլորտի եւ գործարարների համար նոր աշխատանքի հնարաւորութիւնների ապահովման հարցը, ինովացիոն կենտրոնների ստեղծման գաղափարը, նաեւ ստարթափների համար համատեղ աշխատավայրեր կամ coworking space-ներ ստեղծելու միտքը: Յուսամ այսպիսով հնարաւոր կը դառնայ նրանց համագործակցութեամբ այդ աշխատանքներն իրականացնել: Բնականաբար, մի շարք այլ հարցեր կան իրաւական դաշտում, որոնց նաեւ հետամուտ ենք:

Վերջում եւս մէկ անգամ շնորհակալութիւն եմ յայտնում մեր գիտակից ժողովրդին Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ շրջանի ընտրութիւններին մասնակցութեան համար եւ շնորհաւորում եմ Իրանական Նոռուզը, Ս. Յարութեան տօնների առիթով:

Նոր տարւան կրկին ցանկանում եմ, ցոյց տալ իմ առանձնայատուկ վերաբերմունքը ժողովրդին, արձանագրելով, որ այդ վերաբերմունքը շարունակւելու է:

**-Շնորհակալութիւն:**

Հարցազրոյցը ՍԻՒՆԷ ՖԱՐՄԱՆԵԱՆԻ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ կաթողիկոսի նախագահութեամբ եպիսկոպոսները եւ թեմակալ առաջնորդները հանդէս են եկել յայտարարութեամբ Արցախի գերեվարւած ռազմաքաղաքական ղեկավարների հիմնարար իրաւունքների ոտնահարման դէպքերի վերաբերեալ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի նախագահութեամբ Հայաստանի եպիսկոպոսները եւ թեմակալ առաջնորդները հանդէս են եկել յայտարարութեամբ Արցախի Հանրապետութեան գերեվարւած ռազմաքաղաքական ղեկավարների հիմնարար իրաւունքների ոտնահարման դէպքերի վերաբերեալ, որը ներկայացնում ենք ստորեւ.

«Օրեր առաջ ադրբեջանական քարոզչամեքենան յանցաւոր չարախնդութեամբ եթեր հեռարձակեց Արցախի Հանրապետութեան գերեվարւած ռազմաքաղաքական ղեկավարների հետ պարտադրւած հարցազրոյցների հիման վրայ յօրինւած, առաջիկայ մարտի 28-ին ցուցադրութեան նախատեսւած, այսպէս կոչւած «Անտիտեռոր» վերնագրւած ֆիլմի անոնսը:

Արցախի առեւանգւած ու պատանդառւած ղեկավարների նկատմամբ ցուցաբերւող նման քայլը հերթական անգամ բացայայտում է ադրբեջանական իշխանութիւնների որդեգրած քաղաքականութեան հակահայկական էութիւնը:

Ամօթալի նմանօրինակ գործողութիւններով ուղղակիօրէն ոտնահարւում եւ անարգւում են միջազգայնօրէն ճանաչւած մարդկային հիմնարար իրաւունքները: Հերթական անգամ փորձ է արւում գերեվարւած անձանց խոցելիութիւնն օգտագործելու անբարոյ գործելաոճի միջոցով ապակողմնորոշել միջազգային հանրութեանը եւ տասնամեակներ շարունակ ադրբեջանական բռնութիւնների ու գոյաբանական սպառնալիքների դէմ արցախահայութեան մղած ինքնորոշման արդարացի պայքարը ներկայացնել որպէս ահաբեկչութիւն:



Գերեվարւած հայորդիներին նւաստացնող բացայայտ այս գործողութիւնները կրկին ակներեւ են դարձնում խաղաղութեան հասնելու Ադրբեջանի ղեկավարութեան հաւաստիացումների կեղծ ու նենգամիտ բնոյթը:

Խաղաղութիւնը չի կարող կերտւել հայ ժողովրդի արժանապատւութեան ոտնահարման, ատելութեան ու թշնամանքի շարունակական սերմանման եւ արցախահայութեան արդար իրաւունքների նկատմամբ անյարգալից դրսեւորումների պայմաններում:

Հայաստանի իշխանութիւնները «խաղաղութեան դարաշրջան» կերտելու իրենց ձգտումներում առաջնայնօրէն պէտք է հասնեն Ադրբեջանի կողմից նմանօրինակ ազրեսիւ ու թշնամական գործողութիւնների բացառմանը եւ բոլոր հայ գերիների անպայմանաւոր ազատ արձակմանը:

Կոչ ենք ուղղում միջազգային հանրութեանը, մարդասիրական առաքելութիւն իրականացնող կազմակերպութիւններին՝ համարժէքօրէն արձագանգել հայ գերիների նկատմամբ Ադրբեջանի դրսեւորած յիշեալ զազրելի գործողութիւններին եւ առաւել գործնական ու ազդու միջոցներ կիրառել հայ գերիների իրաւունքների պաշտպանութեան եւ հայրենիք շուտափոյթ վերադարձի ուղղութեամբ:

Աղօթում ենք Երկնաւոր Տիրոջը, որ զօրացնի բոլոր նեղեալներին ու գերեալներին՝ յաղթահարելու համար մարդկային չարիքի ու արհաւիրքի պատճառած զրկանքներն ու տառապանքները:

Թող Ամենազօր Աստւած օրհնի մեր երկիրն ու ժողովրդին եւ խաղաղութիւն սփռի համայն աշխարհում ու մեր տարածաշրջանում»:

Yerkir.am

# Հ. Մ. «Սարդարապատ» միութեան վարչութեան մտայղացմամբ կայացաւ «Ողջոյն Հեշմաթիէ» 2-րդ միջոցառումը

*Հ. Մ. «Սարդարապատ» միութեան վարչութեան մտայղացմամբ եւ իհարկէ թաղեցիների ցանկութեամբ թւականիս հինգշաբթի, փետրուարի 22-ին Սրբոց Վարդանանց եկեղեցու սրահում 2-րդ անգամ մեծ շուքով ու խանդավառութեամբ նըշւեց «Ողջոյն Հեշմաթիէ» 2 ուրախ ժամանցը:*

*Ծրագիրը իր բնոյթով նմանակում էր անցեալի հին ժամանակաշրջանին, որը իր մէջ ընդգրկել էր հին Հէշմաթիէ քաղաքամասը իր թաղեցիներով: Սրահին կահաւորւել էր եւ ցուցահանդէս էր տրամադրւել «Սահակեան» դպրոցի աշակերտութեան, բնակչութեան, ազգային կառոյցների պատկերներով:*



*Սրահում իր յատուկ տեղն ունէր «Սահակեան» դպրոցի ուսուցչական կազմը ուր ներկաներից դպրոցի փոխտեսչուհի Սոֆիկ Խեչումեանը դպրոցի զանգը ղօղանջելով սկսեց ծրագիրը, որով ներկաներին մի պահ վերադարձրեց դպրոցական տարիներ: Ծրագրի գեղարւեստական բաժինը շարունակւեց օրւայ հաղորդավար Ժասմենա Առաքելեանի բարեգալստեան եւ բացման խօսքով ուր ամփոփ ներկայացւեց քաղաքամասի պատմականի նախաբանը, ապա եւ ցուցադրւեցին քաղաքամասի հին պատմականը ներկայացնող տեսաժապաւէնները, որը նկարագրում էր քաղաքամասի կրօնական-հասարակական կեանքը:*





*Ասմունքներով հանդէս եկան Անուշ Աւանէսեանը, ով ասմունքեց բանաստեղծ Մարտիրոս Օհանջանեանի «Ողջոյն Հեշմաթիէ» ստեղծագործութիւնը, որը նւիրւած էր ձեռնարկի օրւան:*





*Ծրագրին ներկայ էր նաեւ բանաստեղծուհի Իրինա Մանուրեանը, ով ասմունքեց իր գրչին պատկանող Չօն ««Սարդարպատ» միութեանը եւ Հէշմաթիէ քաղաքամասին», նաեւ «Յոյսով եմ սակայն» բանաստեղծութիւնները:*

*Ապա հրաւիրւեց միութեանս հիմնադիր եւ վարչութեան նախագահ Մուշեղ Ծատուրեանը օրւայ առթիւ արտայայտւելու համար, ով իր խօսքում մանրամասն անդրադարձաւ միութեան աշխատանքների 40-ամեայ գործունէութեանը եւ ապա բարձր գնահատեց ներկաներին միութեան հրաւէրի ընդառաջման համար եւ գնահատեց կազմակերպիչ յանձնախմբին:*





*Հարկ է համարւում նշել, որ միութեանս վարչութիւնը ծրագրի թւականը յատուկ նկատի էր առել իր հովանաւորութիւնը տալով Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ շրջանի ընտրութիւնների քարոզարշաւի ի օգուտ մեծարգոյ պատգամաւոր Արա Շահվերդեանի:*



*Ծրագրի երկրորդ բաժինը յագեցած էր խրախճանքով եւ ուրախ երաժշտութեամբ, որի համար հրաւիրւեց Գուրգէն Քարամեանը, ով հեղինակն էր «Հին Հեշմաթիէ» ցուցադրւող տեսաժապաւէնի եւ հակիրճ ներկաներին ներկայացրեց ֆիլմի պատմութիւնը:*

*Օրւայ սեղանապետն էր Ռազմիկ Այդինեանը, ով շատ մեծ աշխուժութիւն փոխանցելով, նաեւ իր սրամտութիւններով ծրագիրը էլ աւելի խանդավառեց ներկաների հետ մտերմաբար անդրադառնալով անցեալի յուշերին:*

*Հիւրասիրութեան բաժնում ուտեստեղէնը պատրաստւել էր 50-ական թւականներին համահունչ մտայղացմամբ, նաեւ օրւայ երաժշտութիւնն, երգն ու պարը եւս համապատասխան էր անցեալին:*

*Ներկաները մեծ բաւարարւածութիւն էին ստացել ծրագրի թէ՛ մթնոլորտից, եւ թէ՛ տեսակից բոլորի մօտ արթնացել էր մի վաղեմի յուշեր, քանի որ հանդիպել էին իրենց անցեալի համադասարանցիներին եւ ընկերներին: Հիացմունքով եւ բարձր բաւականութեամբ գնահատելով կատարւած աշխատանքը սրահն թողեցին իրենց հետ տանելով բարձր տրամադրութիւն:*

*Հարկ է համարւում նշել, որ հիւրերի համար պատրաստւել էր անակնկալ նկարւելու մի բաժին, ովքեր պէտք է նկարւէին «Սահակեան» դպրոցի աստիճաններին, որն ինքնին բոլորին տարել էր վաղ պատանեկութիւն:*

*Վարձքներդ ի կատար*

**Հ. Մ. «Սարդարապատ» միութեան**
**Հանրային կապ**
**Ժասմենա Առաքելեան**

# Սրբազան Հայրը իր գրասենեակում ընդունեց «Կակաչ» պարախմբի ղեկավար՝ Արուս Սարգսեանին



*Երկուշաբթի, մարտի 11-ին, Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանը, իր գրասենեակում ընդունեց «Կակաչ» պարախմբի ղեկավար՝ Արուս Սարգսեանին, ով քաղաքավարական այցելութեամբ հանդիպեց Սրբազան Հօրը:*

*Հանդիպման ընթացքում Արուս Սարգսեանը ներկայացրեց պարախմբի ծրագրերը, նաեւ անդրադարձ ունեցաւ մի շարք դժւարութիւններին:*

*Սրբազան Հայրը մեծապէս գնահատեց եւ անհրաժեշտ թելադրութիւնները կատարելով, յորդորեց շարունակել հայ մշակոյթի ու պարարւեստի բնագաւառում ծաւալող իրենց գործունէութիւնը:*

# Թեմական եւ Կրթական խորհուրդների համատեղ հանդիպում



*Կիրակի, մարտի 10-ին, ազգային առաջնորդարանի դահլիճում տեղի ունեցաւ Թեմական եւ Կրթական խորհուրդների համատեղ հանդիպում, որի ընթացքում նախ անդրադարձ կատարւեց եւ զեկոյց ներկայացւեց դպրոցներին առնչւող աշխատանքների ընթացքին, իսկ հանդիպման հիմնական օրակարգում խորհրդակցութիւն եւ քննարկում կատարւեց Կրթական խորհրդի ներկայացրած երկու հիմնական ծրագրերի վերաբերեալ:*

*Կրթական խորհուրդը, որպէս հեռանկարային ծրագիր՝ մասնագէտ մարդուժ դաստիարակելու առաջարկութեամբ ներկայացրեց «Հայոց դպրոցների համար նոր մարդուժի (ուսուցիչ-ուսուցչուհիների) դաստիարակութեան կարճատեւ ծրագիր»-ը: Այս ուղղութեամբ բացատրւեց, որ առաջիկայ մի քանի տարիների ընթացքում արդէն իսկ հանգստի են կոչւելու փորձառու ուսուցիչներից մի քանիսը, որոնց անհրաժեշտ կը լինի փոխարինել նոր մարդուժով: Խորհրդակցութեան ընթացքում համապարփակ բացատրւեց ուսումնասիրւած եւ նախատեսւած ծրագիրը եւ նախահաշիւը, որը Թեմական խորհրդի հաստատումով, Կրթական խորհրդին յանձնարարւեց գործնական աշխատանքներն իրականացնել:*

*Երկրորդ օրակարգում անդրադարձ կատարւեց «Սողոմոնեան» դպրոցին առնչւող մի շարք դժւարութիւններին եւ յիշեալ դպրոցը «Նայիրի» եւ «Մարիամեան» դպրոցների հետ միատեղման առաջարկութեանը: Այս կապակցութեամբ մանրամասն տւեալները ներկայացւեց եւ որոշւեց ուսումնասիրութիւնները համալրւելուց յետոյ ծրագիրը ներկայացւի Թեմական խորհրդին: Հարկ է նշել, որ այս ուղղութեամբ հանդիպումներ են կայանալու դպրոցի ծնողների եւ պատկան պատասխանատուների հետ:*

*Հանդիպման աւարտին Թեհրանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ Ճրտպ. Նոբայր Արամեանը գնահատեց Կրթական խորհրդի գործունէութիւնը եւ արժեւորեց հայկական դպրոցների գոյատեւման ու յարատեւման համար սատար հանդիսացող բոլոր աշխատանքները:*

**Ազգային առաջնորդարանի**
**Հանրային կապի գրասենեակ**

# ԱՄՆ-ում վախճանուած հայ գրական դէմքեր

## (Մէջբերումներ՝ Ռուբինա Օհանեանի նոյնանուն գրքից)

***Կարօ (Տէրտէրեան Կարապետ)***
***(Karo Derderian) –***
***(کارو- کاراپت دردریان)***



***(1927թ., Համադան, Իրան – 2007, Լոս Անջելէս, ԱՄՆ)***

*Բանաստեղծ, գրող, գրագէտ: Իրանում ճանաչուած իրանահայ երգիչ Վիգէնի եղբայրը: Նա կլանուած կարդացել էր իրանական պոէզիան, բայց նոր պոէզիայի հետեւորդ էր եւ ստեղծագործում էր այդ ոճով: Կարօ Տէրտէրեանը ժամանակին Իրանում ամենաշատ ընթերցուող բանաստեղծներից էր: 1980-ականներին հաստատւում է Լոս Անջելէս, ԱՄՆ: Գրել է պարսկերէն:*

*Հրատարակած գործերն են «Լռութեան խզումը», «Թափառական նամակներ», «Մի մարդու մոլորութեան սիմֆոնիան», «Մտքի թռիչքներ», «Քառատողեր», «Աւազներ եւ դիւցազներգութիւններ», «Խաւարի ստուերը», «Կոտրուած խաչը», «Գերեզման փորողի յուշերը», «Անէծքի դաւթար»/ «Անէծքնամէ»/ եւ «Եղբայրս Վիգէնը»:*

***Մելիք-Յովսէփեան Ժոզէֆ***
***(ژوزف ملیک هوسپیان)***



***(1938, Նոր Ջուղա, Սպահան, Իրան – 2018, Լոս Անջելէս, ԱՄՆ)***

*Գրող, բանաստեղծ, պատմաբան, բժիշկ: Նրա նախնիները Արցախի Խամսայի մելիքներից էին: Պարսկաստանի եւ Ռուսաստանի միջեւ առաջին պայմանագիրը՝ «Գիւլիստանի պայմանագիրը», 1813 թուականին ստորագրուել է Արցախի Գիւլիստանում՝ Մելիք-Յովսէփեանների տանը: Նրանք հետագային հաստատւում են Իրանում:*

*Նրա ընտանիքը Իրանում ճանաչուած էր: Հայրը եւ մեծ հայրը բժիշկներ էին Սպահանում: Ժոզէֆ Մելիք-Յովսէփեանը բժշկութիւն ուսանել է Իրանի Շիրազ համալսարանում եւ ԱՄՆ-ում: Նա իրանական պոէզիայի, յատկապէս Հաֆէզի եւ Ֆերդոսիի սիրահար էր ու Իրանի պատմութեան լաւատեղեակ: Բազմաթիւ ուսումնասիրական յօդուածների, գրական եւ պատմական վերլուծութիւնների հեղինակ է, որոնք լոյս են տեսել իրանական մամուլում: Ունի բանաստեղծութիւններ եւ արձակ գործեր, որոնք որպէս առանձին հատոր չեն հրատարակուել: Գրել է պարսկերէն:*

*Հրատարակած գործերն են «Իրանըն ու Հայաստանը պատմութեան քառուղիներում/ ընթացքում», « ایران و ارمنستان در گذرگاه تاریخ », «Քրիստոնէութեան խոր արմատներն Իրանում եւ արաբների մօտ»/ « ریشه های عمیق مسیحیت در ایران و میان اعراب », «Երեք բժիշկների յուշերը»/ « خاطرات پراکنده سه پزشک »: Վերջին հատորով Ժոզէֆ Մելիք-Յովսէփեանը կարեւոր տեղեկութիւններ է փոխանցում, որոնք ունեն պատմական նշանակութիւն:*

***Տէրունեան Աւետիս Պօղոս***
***(Arthur Derounian, born Avedis Boghos Derounian)***



***(1909 թ., Ադրիանապոլիս, ներկայիս Յունաստան – 1991թ., Նիւ Եօրք, ԱՄՆ)***

*Գրող եւ լրագրող, ամերիկեան քաղաքական գործիչ: Աւարտել է Նիւ Եօրքի համալսարանի լրագրութիւն ճիւղը: Բազմաթիւ գրական անուններ է ունեցել: Ամենայայտնի գրական անունն է John Roy Carlson: Աշխատակցել է ամերիկեան հեղինակաւոր թերթերի: Յուշագրութեան կողքին իրաւագիտական ու քաղաքական հարցերով բազմաթիւ յօդուածներ եւ հրատարակութիւններ ունի: Գրել է անգլերէն:*

*Հեղինակած գործերն են «Under Cover», «The Plotters», «Cairo to Damascus»:*

*Աւետիս Տէրունեանի կրտսեր եղբայրը՝ ԱՄՆ Հանրապետական կուսակցութեան անդամ Սթիւէն Տէրունեանը, 6 շրջան Նիւ Եօրքից ներկայացուցիչ է եղել ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում/ Կոնգրեսում: Աւելի ուշ՝ Նիւ Եօրք նահանգի Գերագոյն Դատարանի դատաւոր:*

***Ֆրենսիս (Գազանճեան) Առլէն***
***(Arlene Francis)***



***(1907 թ., Բոստոն, ԱՄՆ – 2001 թ., Սան Ֆրանցիսկօ, ԱՄՆ)***

*Գրող, խմբագիր, թատրոնի եւ կինոյի դերասանուհի, հեռուստաաստղ: Աւելի ճանաչուած է որպէս դերասանուհի: Սովորել է Նիւ Եօրքի Գիլդ (Guild) դրամատիկական դպրոցում: Աշխատել է ամերիկեան ռադիոյում՝ ստեղծելով 11 անուն հաղորդումներ: Հեռուստատեսութիւնում ստեղծել է 10-ից աւել հաղորդումներ: Գլխաւոր դերեր է ստանձնել թատրոնում ու նկարահանուել տարբեր ֆիլմերում: Խմբագրել է NBC լրատուական ընկերութեան HOME հեռուստահանդէսը: 1973-ին արժանացել է «Տարուայ Կին» տիտղոսին: Կապուած է եղել հայկական շրջանակներին: Գրել է անգլերէն:*

*Հրատարակած հատորներից են «Այդ որոշակի անորոշութիւնը» եւ «Հմայքի կախարդանքը», որ մեծ յաջողութիւն են ունեցել:*

***Օշական Վահէ***



***(1922 թ., Պլովդիւ, Բուլղարիա – 2000 թ., Ֆիլադելֆիա, ԱՄՆ)***

*Բանաստեղծ, գրող, գրականագէտ, խմբագիր: Յայտնի գրագէտ եւ վիպասան Յակոբ Օշականի որդին է: Աւարտել է Երուսաղէմի անգլիական կոլէջը եւ Փարիզի «Սորբոն» համալսարանի Արեւստների բաժինը: Երկար տարիներ ապրել է Բէյրութում եւ դասաւանդել Ամերիկեան համալսարանում եւ «Հայկազեան» կոլէջում: 1976 թ.-ին տեղափոխուել է Ֆիլադելֆիա, ԱՄՆ: Գրականութեան դասախօս է եղել ամերիկեան մի քանի համալսարաններում: 1987-2000 թթ. հիմնել ու խմբագրել է RAFT հայ բանաստեղծութեան եւ գրաքննադատական անգլերէն տարեգիրքը: Խմբագրել է «Քրիստափոր Միքայէլեան. Ամբողջական երկեր» հատորը եւ Յակոբ Օշականի «Երեք թատերախաղեր»-ը: Աշխատակցել է հայ մամուլին:*

*Հրատարակած բանաստեղծութիւնների հատորներն են «Պատուհան», «Քաղաքը», «Քառուղի», «Ահազանգ», «Խուճապ», «Արւարձաններ», «Համբոյրը», «Ինքնութիւն», «Ճամբորդը»: Հրատարակած վէպերն են «Փախստականը», «Թակարդին մէջ», «Մեռունդներ», «Հատընտիր»:*

***Չամրաս (Աղախանեան) Արփիկ***



***(1925 թ., Թաւրիզ, Իրան – 2021, Լոս Անջելէս, ԱՄՆ)***

*Բանաստեղծուհի, մանկավարժ, երգչուհի, դերասանուհի, հասարակական գործիչ: Փոքր տարիքում ընտանիքը Թաւրիզից տեղափոխւում է Թեհրան: Աւարտում է Թեհրանի Հայերէնագիտական երեկոյեան դասընթացները: Թեհրանում եղել է իրանական «Ռուդաքի» օպերային երգչախմբի եւ հայկական երգչախմբերի անդամ: Դերեր է ստանձնել իրանահայ թատրոնում: 1976 թ.-ին հաստատւում է ԱՄՆ. նախ՝ Նիւ Եօրք, ապա՝ Օկլահոմա, ու վերջնականապէս հաստատւում է Լոս Անջելէսում: Ուր որ եղել է, ազգայինմիութենական կեանք է ունեցել եւ զբաղուել մանկավարժութեամբ:*

*Հրատարակած գործերից են «Հայրենիք տանող ճամբայ», «Միշտ Ձեզ հետ», «Տուն դարձիր, որդի՛ս»:*

# Արամ Ա Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ բացուել է Խորէն Ա կենտրոնը

***Արամ Ա Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ բացուել է Խորէն Ա կենտրոնը: Այս մասին յայտնում են կաթողիկոսութեան մամուլի ծառայութիւնից.***



*«Գարակէօզեան եւ Սուրէն Խանամիրեան նախկին ազգային վարժարանների կառոյցը, Ֆանարի Լէյլաւան ժողովրդային տուներին կից, երիտասարդական ու մշակութային կենտրոնի պատշաճեցման համար վերանորոգութեան ենթարկելուց յետոյ, հանրութեանը կը տրամադրուի որպէս «ԽՈՐԷՆ Ա ԿԵՆՏՐՈՆ»: Այս առիթով, ներկայութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային Կենտրոնական վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովների, թեմակալ առաջնորդների, թեմերի ազգային վարչութեանց ատենապետների, հայ համայնքների ու քաղաքական կուսակցութեանց ներկայացուցիչների, միաբան հայրերի եւ դպրեվանքի մի խումբ աշակերտների, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա կաթողիկոսը կատարեց կենտրոնի պաշտօնական բացումը:*

*Վեհափառ Հայրապետը իր խօսքում դիտել տուեց, որ Խորէն Ա կենտրոն» անունը արժանի կերպով սոյն կենտրոնի ճակատի վրայ ենք տեսնում, որովհետեւ երջանկայիշատակ Խորէն Ա կաթողիկոսը ի՛նքը հաստատել ու կառուցել է այս կենտրոնն ու դրան կից գտնուող հասարակական տները: Արամ Ա կաթողիկոսը յիշեցրեց, որ այս կառոյցը վեր է գոյացել որպէս վարժարան, իսկ այսօր, լինելով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան համազգային առաքելութեան մի կարեւոր բաժին, իր մէջ ընդգրկում է կաթողիկոսարանի Հայագիտական եւ «Խաչեր Գալուստեան» մանկավարժական կենտրոնները, Հայ եկեղեցւոյ համալսարանական ուսանողների միութիւնը (Հ.Ե.Հ.Ու.Մ.), «Շնորհալի» ու «Նարեկացի» երգչախմբերը, ինչպէս նաեւ մեր Ս. Աթոռի առաքելութեան հետ աղերս ունեցող զանազան կենտրոններ, ինչպիսին են «Կիլիկիա» մատենադարանը եւ լսարանների ու համագումարների յատուկ սրահներ:*

*Վեհափառ Հայրապետի օրհնութեան ողջոյնի խօսքից յետոյ, նրա գլխաւորութեամբ եւ կենտրոնի տնօրէն հայր սուրբի առաջնորդութեամբ, ներկաները ծանօթացան կենտրոնի շէնքին ու զանազան բաժանմունքներին:*

*Հանդիսութեան գեղարուեստական կոկիկ յայտագրով ելոյթ ունեցաւ դպրեվանքի «Արմաշ» երգչախումբը»:*

## Գագիկ Գինոսեանի դուստր.

# «Արդէն 40 օր առանց քեզ... դարեր արժէին օրերս ու հիմա ժամ չարժէն»



*Գագիկ Գինոսեանի դուստրը՝ Ծովինար Գինոսեանը գրում է.*

*«Արդէն 40 օր է առանց քեզ...*

*Փաստօրէն դարեր արժէին օրերս ու հիմա ժամ չարժէն:*

*Ամէն պահ քեզ հետ ապրելով, մտածում եմ ինչ կասէիր հիմա, եթէ կողքիս լինէիր: Երանի, թէ կողքիս լինէիր...*

*Ամէն բան քեզ մօտ է բերում, ամէն լաւ յիշողութիւն քեզ է կապուած...*

*Անդադար պրպտում եմ մեր նամակները, մեր վերջին ճամբորդութիւնը...*

***Մի օր ինձ գրել է.***
***Իմ արեւն ու իմ հրաշքն ես:***
***Իմ լոյսն ես, եւ անգամ երբ***
***ջղային ես ու յուսալքուած, Դու***
***իմ ստուերն ես դառնում, ու***
***ինձնից անբաժան, եւ***
***միաժամանակ յիշեցնում, որ ես***
***կամ, ու որ դէպ լոյս պիտի***
***քայլեմ, որ Դու իմ ստուերից***
***կրկին վերածնուես ու***
***վերադառնաս Քո վառ տեսակին***
***Ես կը մնամ քո ստուերում ու դու***
***միշտ դէպ լոյս կը քայլես...***

*Անհնար բարդ թւացող այս փորձութիւնը ստիպում է ապրել ու ամէն բան անել, որ գործդ չմոռացուի...*

*Յ. Գ. 1-*

*Դու կապրես շատ-շատ երկար, քանի աշխարհում կը լինեն պարող գէթ 2 հայ, որոնք իրար գտնելուց կը հպարտանան իրարով եւ կը դառնան պարաշրջան...*

*Յ. Գ. 2-*

*Մեր պարախմբի աղջիկներից մէկին՝ ում հայրը եւս վաղ տարիքում լքել է մեզ, գրել էր.*

*Հպարտ քայլի, քանզի Քո վեհութիւնը հէնց իր տեսակի շարունակութիւնն է ու յաւերժացումը:*

*Հպարտ եմ, առաւել քան երբեւէ հպարտ եմ, որ բախտը ինձ շանս է տուել լինել հէնց քո աղջիկը...*

*Երանի ինձ, որ հայրս հէնց դու ես եւ ուրիշ ոչ ոք...»:*

# ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այսու իմ խորին շնորհակալութիւնն եմ յայտնում՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետին, Թեհրանի հայոց թեմի բարեխնամ առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Ս. արք. Սարգսեանին, Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Գրիգոր Ս. արք. Չիֆթճեանին, Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Սիփան Ս. արք. Քէչէճեանին, Իրանի Հայ Կաթողիկէ առաջնորդ՝ Գերշ. Տ. Սարգիս եպս. Դաւիթեանին, Իրանի Հայ Աւետարանական եկեղեցու եւ համայնքի հոգեւոր հովիւ Վեր. դոկտ. Միշէլ Աղամալեանին, Թ. Հ. Թ. 17-րդ շրջանի Պատգամաւորական ժողովին, Ատրպատականի հայոց թեմի Պատգամաւորական ժողովին եւ Թեմական խորհրդին, Թ.Հ. Թ. Թեմական խորհրդին, Թ.Հ. Թ. Հաշուեքննիչ մարմնին, Թ. Հ. Թ. Կրթական խորհրդին, Արժ. քահանայ հայրերին, Ս. Սարգիս եկեղեցու, Սրբ. Վարդանանց եկեղեցու, Ս. Մինաս եկեղեցու, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու, Ս. Աստուածածին եկեղեցու, Սրբ. Թարգմանչաց եկեղեցու, Ս. Գէորգ եւ Թադէոս-Բարթուղիմէոս եկեղեցիների ընտանիքներին եւ խորհուրդներին, Հայոց ազգային դպրոցների եւ մանկապարտէզների տեսչութեան, ուսուցչական կազմին եւ ծնողական խորհուրդներին, «Ալիք» հաստատութեան, «Ալիք» օրաթերթի տնօրէնութեան եւ պաշտօնեաներին,Ուրմիայի Եկեղեցական խորհրդին, «Ա. Աւետիսեան» ազգ. բուժարանի Խնամակալ մարմնին,

**اسقف کلیسای شرق آشوری تهران مارنر سای بنیامین، جناب آقای دکتر سید عزت الله ضرغامی، وزیر محترم میراث فرهنگی، گردشگری و صنایع دستی، جناب دکتر رضا مراد صحرایی وزیر محترم آموزش و پرورش، جناب آقای تیموری قائم مقام محترم وزیر جهاد کشاورزی، جناب آقای اسماعیل جانعلی پور مدیر کل محترم مجامع، تشکلها و فعالیتهای فرهنگی معاونت فرهنگی وزارت فرهنگ و ارشاد اسلامی، جناب آقای دکتر پیر حسین کولیوند ریاست محترم جمعیت هلال احمر جمهوری اسلامی ایران، جناب آقای محمد سروش معاون محترم فرهنگی اداره کل مطبوعات و خبرگزاریهای داخلی وزارت فرهنگ و ارشاد اسلامی، هیئت مدیره محترم آشوریان ارومیه و حومه، آقای یوناتن بت کلیا ریاست محترم هیئت مدیره انجمن آشوریان تهران، ریاست و معاونین محترم وزارت آموزش و پرورش منطقه هشت شهر تهران، معاونت محترم توسعه مدیریت برنامه ریزی راهبردی و امور مجلس سر تیپ پاسدار رضا طلایی نیک، جناب آقای مهندس بهادر ذکریا ریاست محترم دفتر فنی و مهندسی جنوب شهر تهران، ریاست محترم اتاق بازرگانی مشترک ایران - ارمنستان جناب آقای هرویک یاریجانیان،**

«Նայիրի» տարր. դպրոցի տեսչութեան, ծնողական խորհրդին եւ ուսուցչական կազմին, «Նայիրի-Սողոմոնեան» միջն. դպրոցի տեսչութեան, ծնողական խորհրդին եւ ուսուցչական կազմին, «Թունեան-Թովմասեան» դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմին, ծնողական խորհրդին, ծնողներին եւ աշակերտուհիներին, «Թունեան» դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմին եւ ծնողական խորհրդին, «Գոհար» տղ. միջն. դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմին եւ ծնողական խորհրդին, «Թունեան» դպրոցի հանգստի կոչուած մի խումբ ուսուցիչներին, «Արաքս» դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմին, ծնողական խորհրդին, 70-ամեակի յանձնախմբին, ծնողներին եւ աշակերտութեան, «Արարատ» դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմին եւ ծնողական խորհրդին, «Շանթ-Մարիամեան» դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմին եւ ծնողական խորհրդին, «Ն. Գիւլբենգեան» դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմին եւ ծնողական խորհրդին, «Մարի Մանուկեան» դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմին եւ ծնողական խորհրդին, «Մարիամ» Կրթական հաստատութեան աղջ. դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմին եւ ծնողական խորհրդին, «Մարիամ» Կրթական հաստատութեան տղ. դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմին եւ ծնողական խորհրդին, «Մարիամ» Կրթական հաստատութեան մանկապարտէզի տեսչութեան, ուսուցչական կազմին եւ ծնողական խորհրդին, «Էլպիս Փերահեան» մանկապարտէզի տեսչութեան, ուսուցչական կազմին եւ ծնողական խորհրդին, «Ա. Ա. Ահարոնեան» մանկապարտէզի տեսչութեան, ուսուցչական կազմին եւ ծնողական խորհրդին, «Սասուն» մանկապարտէզի տեսչութեան, ուսուցչական կազմին եւ ծնողական խորհրդին, Ուրմիայի «Մասիս» դպրոցի տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, Ուրմիայի «Նայիրի» մանկապարտէզի տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, Մարմնա-մտային խանգարումներով հայ երեխաներին օժանդակող «Ակունք» կենտրոնի տնօրէնութեան, ուսուցչական կազմին, ծնողական խորհրդին եւ աշակերտներին, Հ. Մ. «Արարատ» կազմակերպութեան եւ Կենտրոնական վարչութեան, Հ. Մ. «Սիփան» միութեան, Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան, Հ. Մ. Մ. «Րաֆֆի» համալիրի վարչութեան, Հ. Մ. «Սարդարապատ» միութեան, Հ. Բ. Ը. Մ. վարչութեան, Հ. Հ. Ը. միութեան վարչութեան, Հ. Ուս. «Չհարմահալ» միութեան, Հայ Ճարտարապետների եւ Ճարտարագէտների միութեան վարչութեան, Ի. Հ. Արհեստաւորների միութեան, Հ. Օ. Մ. Թաւրիզի մասնաճիւղի վարչութեան, Հ. Օ. Մ. Ուրմիայի մասնաճիւղի վարչութեան, Ուրմիայի ազգային իշխանութեան, Եկեղեցու խորհրդին եւ Պատգամաւորական ժողովին, Ուրմիայի Հ. Մ. Ա. Կ. մասնաճիւղի վարչութեան, Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան միութեան, «Հայ կին» եւ կից միութիւններ՝«Արմենուհի», «Անահիտ» եւ «Անի», Ի. Գրողների միութեան վարչութեան, Հայ կաթողիկէ «Չիլոյեան» հանգստեան տան, Թաւրիզի «Ռոստոմ-Գասպար» գրադարանին, Արաքի հայոց եկեղեցա-դպրոցակ. հոգաբարձութիւն, «Ակունք» պարային համոյթի ղեկավար՝Կարինէ Մանուչեարեանին, «Կակաչ» պարախմբի գեղարուեստական ղեկավար եւ հիմնադիր՝ Արուս Սարգսեան-Աւագեանին, խմբի պարուսույց, փորձավար եւ բեմադրիչ՝ Արմինէ Աւագեանին, «Զարթօնք» պարախմբին, «Յակոբեան» ընկերութեան տնօրինութեան, «Աղուանս մեդտրոնիքս» ընկերութեան տնօրէնութեան եւ պաշտօնեաներին, «ՍԱԹԻ» Միջազգային փոխադրական ընկերութեան, «Սէթ» սուրճի տնօրէնութեան՝ Արտեմ Շահբաբեանին, «Արամ» սուրճի տնօրէնութեան՝ Էդուին Միրզայեանին,

**آقای آلفرد کشیش پانوسی مدیریت محترم شرکت فرآورده های گوشتی کشیشیان، جناب آقای گورک غوکاسیان مدیریت محترم شرکت فرآورده های گوشتی میکائیلیان، آقایان ادیک و ساکو مجنونیانس مدیریت محترم شرکت ارومیه شن ریز، آقایان کارو و گاگیک جورجیان مدیریت محترم شرکت آرمان نقش سبز ارس، مدیریت محترم کارخانه ماشین سازی ج. آ. م. نظریان، آقایان ظهرابیان مدیریت محترم رستوران آرمن، مدیریت محترم آژانس مسافرتی شعاع گشت، مدیریت‌محترم مجموعه AATC،آقای رازمیک قازاریان مدیریت محترم شرکت سیس، مدیریت محترم گروه خودرویی‌هویک، مدیریت محترم موسسه فرهنگی هنری جلوه، مدیریت محترم مجموعه طلای اوحانیان، آقای ژوزف عیسوی مدیریت محترم گروه مالی آپا، آقای آرتین شاه نظری مدیریت محترم شرکت مهندسی آرمن گلپاد پارس، مدیریت محترم شرکت طیوران ابزار، مدیریت محترم شرکت مانا طرح زیگورات، شرکت ساختمانی بنداشت آقای آرین خسرویان، مدیریت محترم فروشگاه هایپروان، آقای گویک نرسسیان مدیریت محترم شرکت اطلس توسعه زرین، مدیریت محترم شرکت فنجان داغ خوارزمی، مدیریت محترم شرکت ایده سازان مانا آقای صمدی، جناب آقای آرزومند مدیریت محترم مجتمع آموزشی شانت-ماریامیان،جناب آقای مهدی کاظمی، جناب آقای آرش یزدی، جناب آقای دکتر کارلو آبنوسیان، سرکار خانم دکتر تالین مهدی یان، جناب آقای کارو پطروسیان مدیریت محترم موسسه فراحساب.**

Ակադեմիկոս դոկտ. Մկրտիչ Թումանեանին, դոկտ. Կարէն Խանլարեանին, ճրտ.Վարդան Վարդանեանին, Անդրէ Մանուկեանին, Մատթէոս Մատթէոսեանին, Հերիկ Եարիջանեանին եւ Եարիջանեան եղբայրներին, Թէոդիկ Մարկոսեանին, Արաբօ Ղազարեանին, Վահէ Ահարոնեանին, Յովսէփ Աւետեանին, մայեստրօ Ռազմիկ Օհանեանին, «Տաւիղ» եւ «Արարատ» երգչախմբերի ղեկավար՝ Արփի Սիմոնջեանին, Արա եւ Անդրէ Գալստեաններին, Վետերան մարզիկներ՝ Մայիս Մինասեանին, Մարգար Աղաջանեանին, Սերոժ Աբրահամեանին, Սամսոն Պետրոսեանին, Էդմոնդ Բզիկին, Արմէն, Թալին, Ալէք եւ Անիա Աւագեաններին, դոկտ. Ռայմոնդ եւ Մառլէն Թորոսեաններին, Մառլենէ Շահբանդէ **آژانس مسافرتی اوج درنا**-ին , «Գովազդեր» ցանցի տնօրէն՝ Արբի Բոնիադեանին, «Հայ գովազդեր», «vipalice» գովազդերի տնօրէն Ալիս Բաղդասարեանին, «ace-film» տնօրէն՝ Արմոնդ Միրզախանեանին եւ Վիգէն եւ Անժէլ Ամիրեաններին, Արաքս եւ Մասիս Խաչիկեաններին, Արթին Դաւթեանին եւ Ալմարա Մեջլումեանին ու բոլոր նրանց, ովքեր նամակով, բացիկով, հեռախօսակապով եւ անձամբ շնորհաւորեցին եւ իրենց բարեմաղթանքներն ուղղեցին՝ Իրանի Իսլ. խորհրդարանի ընտրութիւններում, որպէս Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր վերընտրուելու կապակցութեամբ: Յոյսով եմ, որ ինչպէս անցեալ չորս տարիների միասնաբար կը յաղթահարենք մարտահրաւէրները եւ կը կարգաւորենք առկայ խնդիրները:

Մաղթում եմ բոլորին քաջառողջութիւն եւ յաջողութիւն:

**ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԹԵՀՐԱՆԻ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ՝ ԱՐԱ ՇԱՀՎԵՐԴԵԱՆ**

# ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Այսու Հ. Մ. «Սարդարապատ» միութեան վարչութեան եւ անդամների անունից ջերմօրէն շնորհաւորում ենք Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր յարգելի՝





**պրն. Արա Շահվերդեանին,**

Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր յարգելի՝

**պրն. Գեղարդ Մանսուրեանին՝**

**Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններին ընտրուելու կապակցութեամբ:**

Իրանահայութեան զոյգ պատգամաւորներին մաղթում ենք յաջողութիւն եւ ուժ ու կորով այս դժւարին եւ պատասխանատու աշխատանքում:

# ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Այսու Թ. Հ. Կ. Բ. ընկերութեան վարչութեան եւ անդամների անունից ջերմօրէն շնորհաւորում ենք Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր յարգելի՝

**պրն. Արա Շահվերդեանին,**

Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր յարգելի՝

**պրն. Գեղարդ Մանսուրեանին՝**

**Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններին ընտրուելու կապակցութեամբ:**

Մաղթում ենք ուժ ու կորով այս դժւարին եւ պատասխանատու աշխատանքում:

**ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԴԱՄՆԵՐ,«ՍՕՍԷ ՄԱՅՐԻԿ» ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏՈՒՆ ԵՒ «Ս. ԳԷՈՐԳ» ԾԵՐԱՆՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԵՒ ԲՆԱԿԻՉՆԵՐ**

سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
QeshmAir
نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر
شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن
Թռիչքներ է իրականացնում
**երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը,**
**նաեւ յաւելեալ թռիչքներ**
**մարտի 23-ին, 27-ին եւ 31-ին (۴ – ۸ – ۱۲ فروردین)**
դէպի Հայաստան եւ վերադարձ
**ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ**
تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف
WWW.SAFARDOUSTAN.COM
۸۸۵۱۴۰۵۰



Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

**«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը**

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համաձայնելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16

Հեռ.՝ 88761154

**«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ**

**ԱԼԻՔ** Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
**ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ**
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ՝
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

# ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Մեր ջերմագին շնորհաւորանքներն ենք յայտնում՝

**պրն. Գեղարդ Մանսուրեանին՝**

**Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան կողմից պատգամաւոր ընտրուելու առթիւ:**

Մաղթելով՝ քաջառողջութիւն, ուժ, եռանդ եւ յաջողութիւն Ձեզ՝ անձնական եւ գործնական կեանքում:

**ԻՐԱՆԻ ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ**

# ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

ՀԲԸՄ

Այսու ջերմօրէն շնորհաւորում ենք

**պրն. Արա Շահվերդեանին՝**

**Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան կողմից պատգամաւոր ընտրուելու կապակցութեամբ:**

Յարգելի պրն. Արա Շահվերդեան, Աստուած օրհնի եւ օգնական լինի Ձեզ՝ Ձեր պատասխանատու առաքելութիւնը ի կատար հասցնելու գործում:

**Հ. Բ. Ը. Մ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ, «ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ» ԵՒ «Ն. ԳԻՒԼԲԵՆԿԵԱՆ» ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ, ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ ԵՒ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆՔ**

Մի հեղինակաւոր արդիւնաբերական ընկերութիւն կարիք ունի.

- Հաշւապահութեան մասնագէտ
- Քիմիայի մասնագէտ
- Քարտուղարի, որը ծանօթ լինի վարչական աշխատանքներին

**آگهی استخدام**

یک شرکت معتبر تولیدی به افراد ذیل نیازمند است.

– کارشناس حسابداری
– کارشناس شیمی
– منشی جهت امور اداری

ارسال رزومه به واتس آپ: ۰۹۱۹۵۸۵۲۴۷۷

## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակւած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ԱԴԷԼ Մ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ (ԳԷՈՐԳԵԱՆ)

ցաւալի մահը, որը փեղի ունեցաւ մարտի 2-ին, ԱՄՆ-ում:

Թաղումը կը կատարուի մարտի 21-ին, նոյն վայրում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Ալմա, Վանիա եւ Վանէ Պետրոսեաններ՝ դուստրը, փեսան եւ թոռնուհին:

Վահէ եւ Նադիա Մ. Ղարագեօզեաններ՝ որդին եւ հարսը՝ ընտանեօք:

Ռուբինա Մ. Ղարագեօզեան՝ փոքր դուստրը:

Էդուարդ, Օհնեթ եւ Օշին Մ. Ղարագեօզեաններ՝ փոքր որդին եւ իր կինը՝ ընտանեօք:

Անահիտ Տ. Պօղոսեան՝ փոքր հարսը՝ ընտանեօք:

Մարգուշ Տ. Պօղոսեան՝ փոքր դուստրը:

Մ. Ղարագեօզեան եւ Գէորգեան ընտանիքներ՝ հարազատները:

### ՆՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ռուբինա եւ Էդուարդ Մ. Ղարագեօզեանները իրենց շատ սիրելի հօրեղբօր կնոջ յիշատակին 100.000.000 ռիալ նուիրատուութիւն են կատարել Թաւրիզի ՀՕՄ-ի «Ծնրունի Գասպարեան» մանկապարտէզ-նախակրթարանին:

Գումարն ստանալ «Ալիք»-ից:

**ՔԱՐԻՄԻ**

Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ

خریدار فرش، یخچال فریز، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک

Հեռ.՝ 88594063 եւ 09121193212

## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակւած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ԹԵՒԱՆ ԲԱԲԱԽԱՆԻԻ

ցաւալի մահը, որը փեղի ունեցաւ շաբաթ, մարտի 16-ին:

Թաղումը կը կատարուի երեքշաբթի, մարտի 19-ին, առ. ժամը 11:00-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Ցուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ առ. ժամը 10:00-ին ներկայ գտնւել հանգուցեալի բնակարանում՝ գերեզմանատուն մեկնելու համար:

**ՀԱՍՑԷ՝**

Նարմաք,Հարաւային Շիրմարդ պող. Ռաջաբբոլուքաթ փողոց, համար 130:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ «Նայիրի» սրահում (Զարքեշ պող.)

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Ռիմա Ղուկասեան՝ այրին:

Մեղմիկ Բաբախանի՝ դուստրը:

Թաղէ եւ Մարի Բաբախանիներ՝ որդին եւ հարսը:

Զարեհ եւ Նայիրի Բաբախանիներ՝ որդին եւ հարսը՝ զաւակներով:

Բաբախանի, Ղուկասեան, Նոռուզի եւ Շահվերդեան ընտանիքներ՝ հարազատները եւ խնամիները:

املاک هنرمندان

● بزرگترین آژانس مسکن
مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست

آدرس: میدان هفت تیر، کریمخان،
خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک۴

تلفن: ۸۸۸۴۵۵۷۷– ۸۸۸۴۵۵۶۶
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակւած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ՇՈՒՇԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ (ԲԱՐՁԵԳԱՐ ՆԱԶԱՐԻ)

ցաւալի մահը, որը փեղի ունեցաւ կիրակի, մարտի 17-ին:

Թաղումը կը կատարուի երեքշաբթի, մարտի 19-ին, կէսօրուայ ժամը 12:00-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Ցուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ առ. ժամը 11:00-ին ներկայ գտնւել հանգուցեալի բնակարանում՝ գերեզմանատուն մեկնելու համար:

**ՀԱՍՑԷ՝**

Հարաւային Մաջիդիէ, Երկրորդ 16-մետրանոց պող., Աղէլզադէ փողոցին կից:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան «Սուքերեան» սրահում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Ռայմոնդ, Քաթրին եւ Վեդի Բարզեգար Նազարիներ՝ որդին, հարսը եւ թոռը:

Ռոզեթա, Հենրիկ եւ Քալին՝ Խաչատրեաններ՝ դուստրը, փեսան եւ թոռնուհին:

Արմոնդ եւ Արսինէ Բարզեգար Նազարիներ՝ որդին եւ հարսը:

Սեդա Ստեփանեան (Հաթամեան)՝ քրոջ դուստրը (Կանադա):

Վարդուհի եւ Սեդիկ Բարզեգար Նազարիներ՝ փայերը՝ ընտանեօք (ԱՄՆ):

Նազարեան, Խաչատրեան եւ Շահբազեան ընտանիքներ՝ խնամիները:

Գրիգորեան եւ Բարզեգար Նազարի ընտանիքներ՝ հարազատները:

«Արարատ»

Ամէն տեսակ տնային իրերի գնորդ

سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی، رادیو گرام مبله، صفحه گرام،
لوازم چوبی آنتیک و خرده

Հեռ.՝ 88523388

SET Coffee

فروشگاه: هفت تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک ۸۱۱۷

0936-6726563
021-88305827
www.set-coffee.com

قهوه سِت

## Իրանի Իսլամական խորհրդարանի նորընտիր պատգամաւոր Գեղարդ Մանսուրեանի առաջին պաշտօնական հանդիպումը Տ. Սիփան արք. Քէչէճեանի հետ



*Իրանի Իսլամական խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան նորընտիր պատգամաւոր Գեղարդ Մանսուրեանը, մարտի 17-ի առաւօտեան, ազգային առաջնորդարանում, իր առաջին պաշտօնական հանդիպումը ունեցաւ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սիփան արք. Քէչէճեանի հետ:*

*Նախ Գեղարդ Մանսուրեանը շնորհաւորեց Սրբազան Հօրը Արքութեան տիտղոսին արժանանալու համար: Ապա պատգամաւորին ուղղւած շնորհաւորանքի խօսքով հանդէս եկաւ թեմակալ առաջնորդը եւ նրան մաղթեց յաջողութիւններ իր ստանձնած պաշտօնում:*

*Խօսելով խորհրդարանի գործունէութեան դժւարութիւնների վերաբերեալ եւ այն մեծ պատասխանատւութեան մասին, որը դրւած է պատգամաւորների ուսերին, Սրբազան Հայրը յոյս յայտնեց, որ նորընտիր պատգամաւորը ինչպէս միշտ լինելու է գործունեայ եւ հետեւողական իր աշխատանքներում, կանգնելու է ժողովրդի կողքին եւ բարձրաձայնելու է նրանց խնդիրները:*

*Գեղարդ Մանսուրեանը տեղեկութիւններ փոխանցեց Իրանի Իսլամական խորհրդարանի ընտրութիւնների ընթացքի եւ շտաբի գործունէութեան վերաբերեալ, որից յետոյ անդրադարձ եղաւ հայ համայնքի մասնակցութեանը ընտրութիւններին:*

*Հանդիպմանը երկու մասնակիցները իրենց գոհունակութիւնը յայտնեցին իրանահայ համայնքին՝ թէ՛ խորհրդարանական, եւ թէ՛ Բանիմացների խորհրդի ընտրութիւններին գիտակից եւ խուռներամ մասնակցութեան համար:*

**Հանրային կապ՝ Ս. Հ. Թ. ազգային առաջնորդարանի**

## Մեր ընթերցողների ուշադրութեան

**Մեր յաջորդ համարը՝ ապրիլի 2-ին (ֆարւարդինի 14)**

*Մեր ընթերցողներին յայտնում ենք, որ իրանական Նոր տարւայ (Նոռուզ) առթիւ խմբագրատունս արձակ լինելով՝ թերթիս յաջորդ համարը լոյս է տեսնելու երեքշաբթի, ապրիլի 2-ին (ֆարւարդինի 14):*

*«ԱԼԻՔ»*

Իշխան Սաղաթէլեան.

## «Սահմանագծումը սկսել են Տաւուշից, որ թշնամուն բերեն մեր զինուորի թիկունք»





*Մարտահրաւէրների դէմ պայքարելն այսօր գոյաբանական խնդիր է, այս խնդիրների մասին մենք երեք տարի խօսել ենք ու պայքարել: Այդ մասին Արտաշատի բնակիչների հետ հանդիպման ժամանակ ասել է «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեանը:*

*«Ցաւօք, մեր ուզած արդիւնքին չենք հասել՝ կամ պիտի համակերպւենք, կամ հասկանանք՝ որտեղ ենք թերացել, ինչպէս խօսենք մեր հայրենակիցների հետ, բացատրենք այս վտանգը, պայքարենք, ստեղծւած իրավիճակից դուրս գանք: Մենք գնում ենք երկրորդ ճանապարհով, մեր պայքարի ընկերը դուք էք, ուրիշ ռեսուրս չունենք, ուրիշ հնարաւորութիւն չունենք»,- ասել է նա:*

*Սաղաթէլեանի խօսքով՝ Փաշինեանը իրականում տալիս է Տաւուշի գիւղերը ու ասում՝ դրանք Տաւուշի հետ կապ չունեն. «Ալիեւը մի քանի օր առաջ յայտարարեց՝ հրատապ պահանջում է Տաւուշի 4 գիւղերը: Փաշինեանը ասուլիսում ասաց՝ Տաւուշից ոչ մի գիւղ չեմ տալիս, բայց իրականում տալիս է ու ասում՝ դրանք Տաւուշի հետ կապ չունեն: Ալիեւի հետ պայմանաւորւել են՝ սահմանագծման աշխատանքները իրականացնում են հատւածաբար: Դա մեր հատւածն է, որտեղ ունենք դիրքային առաւելութիւն, կահաւորւած դիրքեր, եթէ թշնամին առաջ գայ, դրա գինը թանկ է լինելու: Սահմանագծումը սկսել են Տաւուշից, որ թշնամուն բերեն մեր զինւորի թիկունք»:*

*Սաղաթէլեանը յաւելում է, որ նպատակն է ստեղծել ազգային պետութիւն, որի համար ռեսուրս կայ. «Մեր երկրում կան բազմաթիւ գրագէտ մարդիկ, որոնք պրոֆեսիոնալ են, հմտութիւն ու գիտելիք ունեն, ովքեր կարող են այս երկիրը ստեղծւած իրավիճակից դուրս բերել: Դուք նայէք այսօրւայ պաշտպանութեան նախարարին, արտգործնախարարին, վարչապետի աթոռը զբաղեցրած անձին ու տեսէք արդեօք հայ ազգի մէջ չկան մարդիկ, որ կարող են սրանց փոխարինել ու կառավարել այս երկիրը»:*

*Նրա խօսքով՝ ՀՀ գործող իշխանութիւնները քաղաքական վեկտորը ոչ թէ դէպի Արեւմուտք, այլ դէպի Թուրքիա են փոխում:*

*«Ձեզ ասում են՝ դաշնակից չունենք, ասում են՝ մեր աւանդական դաշնակիցները մեզ լքել են, մենք մնացել ենք մենակ, դրա համար փոխում ենք երկրի արտաքին քաղաքական վեկտորը, որպէսզի ունենանք նոր դաշնակիցներ: Սո՛ւտ են ասում: Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքական վեկտորը դէպի Արեւմուտք չէ, դէպի Թուրքիա է: Մենք գտնում ենք, որ պէտք չէ տարածաշրջան նոր խաղաղացողներ մտցնել ու երկիրը տանել նոր արկածախնդրութեան: Պէտք է շարժւել փոխլրացման ճանապարհով, ոչ թէ՝ մէկը միւսի հաշւին, ոչ թէ աշխարհաքաղաքական կոնֆլիկտները բերել Հայաստան:*

*Մենք գտնում ենք, որ մեր ռազմավարական դաշնակից երկրների հետ, մեր հարեւան Իրանի հետ ունենք բազմաթիւ հնարաւորութիւններ, որոնք այսօր չեն օգտագործւում»,- ասել է նա:*

**Yerkir.am**